Բ. ՏԱՐԻ ԹԻՒ 515 ՈՒՐԲԱԹ 20 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1885 (Ն. Տ.) 2 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1885 23 ԶԻԼՀԻՃՃԷ 1302

40 ՓԱՐԱ.

ՆԱՄԱԿՆԵՐ ՈՐ ԵՒ ԻՑԷ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ Ի ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Նորատունկեան-խան

غلطه‌ده نورادونغیان خاننده آرهولق
غزته‌سی اداره‌سنه

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

Les annonces sont reçues à l'EASTERN AGENCY
Karakeuy, Déirmén han

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

40 ՓԱՐԱ.

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար Տարեկան	ղրշ.	200
» » Վեցամսեայ	»	100
» » Եռամսեայ	»	50
Գաւառաց եւ օտարաց Թղթատարով՝ տարեկան	»	240
Գաւառաց համար եւ օտարաց Թղթատարով՝ վեցամսեայ	»	120
Օտար երկիրներ տարեկան	ֆրանք	56
» » վեցամսեայ	»	28

Գանձը ղրկուած կանխիկ Տնօրէնութեան վրայ է. Խմբագրութեան ղրկուած ձեռագիր կամ գրութիւն ետ չը դարձուիր.

ԾԱՆՈՒՑՄԱՆՑ ԿԵԴՐՈՆԱՏՈՒՆ
ԻՍՏԸՐՆ ԷՃԷՆՍԻ
Գօրծօղլու-Բէյի յէօքիւշի, Գարաքէօյ, Տէյիրմէն-խան

Կ. ՊՈԼԻՍ
ՀԻՆԳՇԱԲԹԻ, 19 ՍԵՊՏԵՄԲԵՐ

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ ՊՈՒԼԿԱՐԱՑ

ԼՈՒՐԵՐ

ԵՐԵԿԻ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿԷՆ

Սերպիոյ ծրագիրը. Շրջաբերականը, զոր Սերպիա ուղղեց Տէրութեանց՝ իր բանակը շարժման վիճակի մէջ դնելուն առթիւ, լաւ ընդունելութիւն գտեր է։ Ուշադրութիւն գրաւեր է մանաւանդ Շրջաբերականին այն հատուած որ կը բացատրէ թէ Սերպիա կը պարտի պաշտպանել իր շահեր։ Շրջաբերականը կը ցուցնէ թէ Սերպիա մտադիր է գործօն դեր մը կատարել արդի տագնապին մէջ։ Սերպիա, զինուորական գործողութեան մը պատրաստուելով, նպատակ ունի Տէրութիւններէն խնդրել հողային փոխարինութիւն մը, ի պարագային որ ճանչուի Պուլկարաց միութիւնը։ Փոխարինութիւնը պիտի լինի եղեր «Հնոյն Սերպիոյ» միացումն ընդ բուն Սերպիոյ։ Սերպ քաղաքագէտք կը պնդեն թէ այսու եւեթ կրնայ ապահովիլ հաւասարակշռութիւնն զօրութեանց ի Պալքանեան թերակղզւոյ, որ կարեւորն է վասն ապահովման Եւրոպական հաւասարակշռութեան։

Ի Պուլկարիա. Շատ մը երկչոտ Պուլկարք Սերպիա կ'ապաստանին եղեր, հրաժարեալ ընդհանուր զինուորագրութենէն զերծ մնալու համար։

— Ռուս բանակին մէջ ծառայող կարգ մը պուլկար սպայք կանչուեցան Սոֆիա։

— Տիկնայք «ոչ-փափկասունք» Պուլկարաց աշխարհին՝ մասնախմբեր կազմած են նպաստելու Ազգային Միութեան կենսական գործին։ Զգեստներ կը շինեն եւ կը կարկտեն, եւ կը ղրկեն ազգային զինուորաց որք կը պատրաստուին եւ կը համախմբուին ի պաշտպանութեան Հայրենեաց։

— Աղեքսանդր Իշխանն Արեւ. Ռումէլիի սահմանագլուխը գնաց, հոն համախմբեալ պուլկար բանակն աչքէ անցունելու, պէտքերն իմանալու եւ զօրքերը քաջալերելու համար։

— Պուլկար հեծելազնդոց համար մեծ թուով ձիեր կը նուիրուին հայրենասիրաց կողմէ. բայց կամաւոր նուէրք բաւ չլինելով, կառավարութիւնն ետքէն գինը վճարելու պայմանաւ կը ժողվէ բնակչաց ձիերը։

Աղեքսանդր Իշխանը. Պուլկարիոյ Իշխանն հետեւեալ հեռագիրն ուղղած է Մեծ Տէրութեանց.

«Արեւելեան Ռումէլիի նախկին կառավարութիւնը դադրած լինելով, ժողովուրդն, ընդհանրական քուէարկութեամբ մը, զիս իրեն Իշխան հռչակեց։ Պուլկար Իշխանապետութեան բնակիչք միաձայնութեամբ խնդրեցին յինէն ընդունել զայս անուանում։ Ի նկատ առնլով իմ նուիրական պարտականութիւնս դէպ յիմ ժողովուրդս, ընդունեցի զայն պաշտօն առ Պուլկար ազգն ուղղեալ յայտարարութեամբ մը։ Փիլիպէ հասած եւ կառավարութիւնն սահմանած լինելով, ամենէն հանդիսաւոր եղանակաւ կը յայտարարեմ թէ երկու Պուլկարիաներուն ի նորոյ միացումը կատարուած է առանց բնաւ թշնամական դիտման ընդդէմ Օսմ. Կայս. կառավարութեան, որ գերիշխանութիւնը կը ճանչեմ։ Կ'երաշխաւորեմ երկուց երկրաց հանդարտութիւնն եւ բնակչաց ապահովութիւնն առանց խտրութեան ցեղի եւ կրօնի։ Կը դիմեմ Ձեր Կառավարութեան, խնդրելով որ ճանչէք իրաց այս նոր վիճակ, եւ միջնորդէք Վեհ. Սուլթանին մօտ որպէս զի նա եւս հաճի վաւերացնել միութիւնն՝ աւելորդ արիւնհեղութիւն մը արգիլելու համար, ըստ որում ժողովուրդն որոշած է ցմահ պաշտպանել կատարեալ իրողութիւնը։»

Իշխանն ինքզինք կ'արդարացնէ. Վիէննայէ Սեպտ. 25 թուով առ Թայմզ ուղղեալ հեռագիր մը կ'ըսէ.

«Աղեքսանդր Իշխանին կողմէ կէս-պաշտօնական զեկուցում մը պիտի հրատարակի վաղը Վիէննայի լրագրաց մէջ։ Այս յայտարարութիւն կ'ըսէ թէ Իշխանն ո՛ եւ է կերպիւ տեղեկութիւն չունէր ի Փիլիպէ պատրաստուող ապստամբութեան վրայ։ Թէ յանկարծակիի եկած էր, եւ թէ պարտաւորեցաւ անյապաղ գործել երբ յեղափոխութիւնը կատարեալ իրողութիւն մ'էր։ Իշխանը կը հաստատէ թէ ինք ժամանակ չունէր իր ուզած որոշումը տալու, եւ թէ ուրիշ բան չէր մնար իրեն բայց եթէ Փիլիպէ երթալ անմիջապէս, խաղաղութիւնն եւ բարեկարգութիւնը պահպանել կարենալու համար։ Իշխանը կը վերջացնէ յայտարարելով թէ ինք ոչինչ փոխած է Ռումէլիի իրաց վիճակէն, եւ թէ կը շատանայ վարչային հարկաւոր տնօրինութիւններն հրամայելով, սպասելով որ Տէրութիւնք կարգադրեն Պուլկարական նոր խնդիրը։»

Սոֆիայէ կը հեռագրուի սեպտ. 26ին թէ, երկրին ներսերը կատարեալ բարեկարգութիւն կը տիրէ։ Գիւղացի ժողովուրդը կը շարունակէ իր դաշտային աշխատութիւններ։ — Ժողովուրդը լցուած է կառավարական Գօնաքին մէջ, ի Փիլիպէ, եւ կը փափաքի տեսնել զ'Իշխանն եւ ծափահարել։ Մուտքն ազատ է ամենուն համար։ Մահմետական ժողովուրդն ալ կը մասնակցի եղեր (...) այս ցոյցերու. (Թերեւս բռնութեամբ)։ Պահեստի վաշտք անդադար կը հասնին Սոֆիա, եւ կը ղրկուին սահմանագլուխ։ Ռուսաց թողած բոլոր պաշտօնները կը վարեն պուլկար սպայք։

Հէրսէկ-Պօսնա. Վիէննայի կէս-պաշտօնական լրագիրք կը հերքեն այն զրոյց թէ Աւստրիա կ'ուզէ եղեր օգուտ քաղել արդի տագնապէն՝ փութացնելու համար Պօսնա-Հէրսէկի միութիւնն ընդ Կայսրութեան, կամ ուրիշ փոխարինութիւն մը ստանալու համար։ Աւստրիոյ պէս մեծ Տէրութիւն մը, կ'ըսուի, խեղճ փոքրիկ Իշխանապետութեան մ'օրինակէն օրինակ կամ առիթ առնելու պէտք չունի այնպիսի ծանրակշիռ տնօրինութիւն մ'ի գործ դնելու համար։ — Շատ շիտակ խօսք, միայն թէ լոկ խօսք մը չլինէր։

Անհամաձայն լուր. Կ. Պոլիս, 25 սեպտ. Բ. Դուռը սահմանագլխոյ մօտ իր զօրաց գրաւել տուաւ Արեւ. Ռումէլիի գիւղ մը, նիւթական արարքով մը հաստատելու համար իր իրաւունք. բայց աւելի յառաջ չպիտի երթայ՝ Տէրութեանց հետ չհամաձայնած։

Պիսմարք եւ Սուլթ. Կ. Պոլիս, 26 սեպտ. Պերլինէ եկած հեռագրեր կը ծանուցանեն թէ Պիսմարք Իշխան, ընդունելով օսմ. դեսպան Սայիտ փաշային հրաժեշտի այցելութիւնը, խստիւ պարսաւեր է Ռումէլիի դէպքերն, եւ յանձնարարեր է Սայիտ փաշային ըսել Վեհ. Սուլթանին թէ, Գերմանիա կրցածը պիտի ընէ՝ խաղաղական միջոցներով պաշտպանելու համար Թուրքիոյ իրաւունքներն ի վերայ Պուլկարիոյ եւ Ռումէլիի։ Պուլկարիոյ մէջ պաշտօն վարող ռուս սպայից յետս կոչումն արդիւնք է եղեր խիստ լեզուին որով Պիսմարք Իշխանը խօսեր է Ռուսիոյ դեսպանին։

Նախարարական փոփոխում. Եւրոպական մամուլը խաղաղական եւ նպաստաւոր մեկնութիւն մը կուտայ օսմ. նոր նախարարութեան կազմութեան, եւ ընդհանուր գոհունակութիւն կը յայտնուի մանաւանդ Պերլինի օսմ. դեսպան Սայիտ փաշային Արտաքին գործոց նախարար անուանելուն. որովհետեւ Ն. Վսեմութիւնը երկար ժամանակ մնացած լինելով ի Պերլին, հիմնովին ուսումնասիրած է եւրոպական աշխարհավարութեան այժմեան ուղղութիւնն ու պայմանները։

Պուլկար եւ Սերպ. Պելկրատ, 26 սեպտ. Պուլկար զօրաց 4 վաշտեր գրաւեցին սերպիական սահմանագլուխը մինչեւ Պալին-Պօռ, որ Բրակովեվածի սերպական գաւառին կը պատկանի։

— Լոնտոն, 28 սեպտ. Թայմզ կ'ըսէ թէ Տէրութիւնք չեն կրնար ընդունիլ Սերպիոյ եւ Յունաստանի աշխարհավարութիւնն, որք պուլկարական միութեան ճանաչման առթիւ իրենց համար հողային փոխարինութիւն մը կը պահանջեն ի վնաս Թուրքիոյ։ Թայմզ խորհուրդ կուտայ հսկել մանաւանդ Սերպիոյ վրայ, որ յախուռն գործողութեամբ մը կրնայ խանգարել խաղաղութիւնը։

Ռումանիա. Վիէննա, 28 սեպտ. Ռումանիոյ նախարարապետ Պ. Պրատիանօ այսօր տեսակցեցաւ Ֆրանձ Եօզեֆ Կայսեր հետ։

Հունգարիա. Պեշդա, 26 սեպտ. Մաճառաց խորհրդարանն այսօր բացուեցաւ։ Երեսփ. ժողովին մէջ, Պ. Պ. Իրանիի եւ Հէլֆի ներկայեցին հարցապնդումներ արտաքին աշխարհավարութեան վրայ, մանաւանդ Քրեմզիէրի կայսերական տեսակցութեան եւ Արեւ. Ռումէլիի եւ Պուլկարիոյ դէպքերուն առթիւ։ Նախարարապետը պիտի պատասխանէ վաղը։

Տէրութիւնք եւ Իշխան. Սոֆիա, 26 սեպտ. Իշխանական կառավարութիւնն եւրոպական կառավարութեանց մօտ ունեցած իր գործակալաց ուղղեց երկու Շրջաբերականներ, ի պատասխանի Տէրութեանց ծանուցագրոյն, որով Իշխանը կը հրաւիրուէր զգուշանալ արիւնհեղութիւն պատճառող ամեն նոր շարժումէ։ Իշխանն առ այս կը պատասխանէ թէ խիստ միջոցներ ձեռք առնուած են արգիլելու ամեն յարձակում Պուլկարաց կողմէ ի Մակեդոնիա, եւ պատժելու խռովարարները։ Պաշտպան վիճակին կիրառութեան ատեն դժուարութենէ եւ թիւրիմացութենէ զերծ մնալու համար, Պուլկար կառավարութիւնը կը խնդրէ ընդհ. հիւպատոսներէն որպէս զի Պուլկարիոյ մէջ հաստատեալ օտար հպատակաց մէկ ցուցակը տան զանազան քաղաքաց իշխանութեանց։ — Իշխանն երկրորդ Շրջաբերական մ'ուղղած է օտար կառավարութեանց, ըսելով. «Ստացայ ձեր երկու ծանուցագրերն։ Արեւ. Ռումէլիի սահմանաց երկայնութեամբ իմ ուղեւորութեանս նպատակն էր. 1. Արգիլել սահմանապահ զօրաց որ բնաւ կրակ չընեն օսմանեան զօրաց վրայ. 2. Հրամայել որ ձերբակալել զէն ի ձեռին Թուրքիոյ հողը մտնել ուզող ամեն մարդ. 3. Հանդարտեցնել այն կողմանց Թուրք ազգաբնակութիւնն, համոզելով թէ չպիտի պատերազմինք Թուրքիոյ դէմ. 4. Ետ ձգեցի իմ ժողովուրդը զէնքընկէց ընելու խորհուրդն. 5. Այսօր Փիլիպէի Մզկիթին մէջ ներկայ գտնուեցայ Մահմետականաց մէկ գոհաբանական աղօթքին ի պատիւ Վեհ. Սուլթանին. 6. Անցած ճամբուս վրայ, Թուրք ժողովուրդն եռանդագին խնդութեամբ կ'ընդունէր եւ կը ծափահարէր զիս։»

Ռուսաց զօրք. Պուքրէշ, 26 սեպտ. Պեսարապիոյ մէջ մեծ թուով ռուս զօրքեր կը համախմբուին։

Ռումանիոյ Մայրաքաղաքէն եկող այս լուր ծանրակշիռ է։ Հավասի Գործակալութիւնն է որ զայն կը հաղորդէ։ Եթէ ստոյգ է, մասնաւոր նշանակութիւն մը կը ստանայ ռուս թերթերուն պահանջումն ու զեկուցումն թէ ռուս զօրքեր պէտք է վերադարձուին զՊուլկարիա։

Իշխանին անկումը. Պետրպուրկ, 27 սեպտ. Մեր քաղաքական ակմբաց մէջ, ընդհանրապէս այն կարծիք կ'արտայայտուի թէ Աղեքսանդր Իշխանն, համակերպելով պուլկարական միութեան եւ գործակցելով անոր ի կատար ածման, վերջացուցած է իր քաղաքական դերն իբրեւ Իշխան Պուլկարիոյ։ Նոր կացութիւն մը երեւան եկած է, որ կը պահանջէ նոր մարդ մը։ Նովօյէ Վրէմիա կարեւոր թերթը կը յայտարարէ թէ պուլկարական նոր Պետութիւնը կառավարելու կարող միակ մարդն է Գարատաղի Նիքիթա Իշխանն։ (Առաջին կարգի գաղափար։ Սլաւ Իշխան մը որ հրամայէ Սեւ ծովէն մինչեւ Ադրիական ծով, եւ Ռուսճուքէ մինչեւ Ադրիանուպոլիս։) Ուրիշ ռուս թերթեր կը յանձնարարեն զՔարակէօրկեւիչ իշխանն, թեկնածուն սերպիական գահուն, պաշտպանեալն Ռուսիոյ Արքունեաց եւ փեսայն Նիքիթա Իշխանին։ — Պուլկարիոյ պատերազմական նոր նախարարը, Պ. Նեքիֆորոֆ իր ուսմանց ընթացքն աւարտած էր ի Պետրպուրկ, եւ կը նկատուի յոյժ կարող սպայ մը։

Հայրենասիրութիւն Պուլկարաց. Պուլկարիոյ Ազգային Երեսփոխանական Ժողովը (Սոպրանիէ), ազգային մեծ ճգնաժամուն մէջ, կուսակցական ամեն կիրք մոռցած, միաձայնութեամբ քուէարկեց նիւթական եւ բարոյական ամենամեծ զոհողութիւններ, զորս կը պահանջէին արդի բացառիկ պարագայք։ Տուաւ միաձայնութեամբ լիազօր արտօնութիւններ Աղեքսանդր Իշխանին, ամեն ինչ վճռաբար որոշելու եւ տնօրինելու համար. պատրաստ դրամ տուաւ 5 միլիոն ֆր. եւ իբրեւ պահեստ քուէարկեց 10 միլիոն ֆր. հաւանեցաւ լրագրաց ազատութիւնը դադրեցնող եւ գրաքննութիւն հաստատող կառավարական առաջարկութեան, եւ վաւերացուց բոլոր Պուլկարիոյ մէջ զինուորական օրինաց կիրառութիւնը փոխանակ քաղաքային օրինաց։ Սոպրանիէն անմիջապէս փակուեցաւ, եւ Պուլկարիոյ Նախարարապետ Պ. Գարավելօֆ կրցաւ նոյն օրը վերադառնալ Փիլիպէ։

Կարծիք Աւստրօ-Հունգարական մամլոյ. Կարծեաց երեք հոսանքներ կը գտուին Աւստրօ-Հունգարիոյ լրագրաց մէջ։ Ձախ լրագիրք միահամուռ եւ ի սրտէ կը համակրին սլաւական դատին, եւ ջերմապէս կը շնորհաւորեն զԱլեքսանդր Իշխանը։ Մաճառ լրագիրք դժգոհ են, եւ կը վախնան թէ Ռուսիա միջոց պիտի գտնէ տեղի ունեցած եղելութենէն իրեն շահ մը հանելու։ Իսկ Վիէննայի լրագիրք ներկայ տագնապին ուրիշ ելք չեն գտներ բայց եթէ ճանչել կատարեալ իրողութիւնն, եւ կը հեղնեն իրաց նախկին վիճակին մասամբ կամ ամբողջովին վերահաստատման գաղափարը։

Պուլկար Պատգամաւորք. Բաց ի հինգ անդամէ բաղկացեալ Պատգամաւորութենէն, որ Փիլիպէէ ճամբայ ելաւ՝ Մեծ Տէրութիւններն համոզելու որպէս զի ճանչեն պուլկարական Միութիւնն, 3 անդամէ բաղկացեալ ուրիշ պատգամաւորութիւն մը ղրկեցին Պուլկարք ի Քոփենհակ Զարին մօտ՝ նորա սիրտը շահելու համար։ Բայց Նորտ Տոյչէ Զայտունկ, Պիսմարք Իշխանին թերթը, կը կարծէ թէ այս երկրորդ Պատգամաւորութիւնն չպիտի հասնի իր նպատակին։

ՌՈՒՍ ԼՐԱԳՐԱՑ ԿԱՐԾԻՔԸ

ՊՈՒԼԿԱՐԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

Ռուսական մամուլն առ հասարակ չափաւոր լեզու մը կը գործածէ Արեւ. Ռումէլիի մէջ կատարուած դէպքերուն առթիւ։ Քաջալերութիւն չի կարդար Պուլկարներուն. սակայն արդարացի եւ բնական գտնէ նոցա վարմունքը։ Ռուսքի Կուրիէր ազատական թերթն հիմնովին կ'ամբաստանէ Պերլինի դաշնագիրն, եւ կը յայտնէ թէ այդ դաշնագիր յոյժ անճոռնի կերպով կազմուած լինելով, շատ բնական էր որ շուտով այնպիսի դէպքեր տեղի ունենային որք Պերլինի դաշնագիրն ոտնակոխ պիտի ընէին։ Դաշնագրին ամենէն անհեթեթ կէտն Արեւ. Ռումէլիի վերաբերող յօդուածն է։ Տէրութեանց ներկայացուցիչք ինքնօրինութիւն չըշնորհելով Պուլկարիոյ, ուշադրութիւն չըրին թէ կը կտրէին նորա մարմնոյն մի կենդանի անդամ։ Նոցա նպատակն եւ դիտաւորութիւնն այլ էին։ Ոմանք կ'երկնչէին թէ Պալքանեան թերակղզւոյն մէջ Արեւելեան Ռումէլին եւս միացնելով Պուլկարիոյ հետ, հաստատուած պիտի լինէր զօրաւոր իշխանապետութիւն մը, որ իր գոյութիւն Ռուսիոյ պիտի պարտէր։ Այլք բարեկամ լինելով Թուրքիոյ, նախանձախնդիր նորա շահերուն, չէին ուզեր Արեւելեան Ռումէլիի բաժանումն Օսմ. կառավարութենէն։ Ահա քաղաքական այսպիսի նկատմամբք Արեւ. Ռումէլիի միացումն ընդ Պուլկարիոյ անկարելի դատուեցաւ։ Սակայն դաշնագրին հեղինակներէն ոմանք արդէն այն ժամանակ ըսին թէ Արեւելեան Ռումէլիի միացումն ընդ Պուլկարիոյ մերձաւոր ապագայի մէջ խնդրոյ նիւթ պիտի լինէր, եւ չի սխալեցան, ինչպէս որ կը տեսնուի արդէն։

Խօսելով Պերլինի դաշնագրին բռնաբարման մասին, Ռուսքիէ կը յարէ. Ազգերն անտարակոյս պարտին նուիրական բան մը համարել իրենց համար դաշնագիրները։ Չպիտի թոյլատրուի որ դաշնադրութիւնք ոչնչացուին յեղափոխու-

---

—= 157 =—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԺԻՒԼ ՎԵՐՆ

ԿՐԱՆԹ 'ՆԱՒԱՊԵՏԻՆ ՈՐԴԻՔՆ

ԳԼՈՒԽ ԺԶ.

ԵՐԿՈՒ ԿՐԱԿԻ ՄԷՋ

Մարի կ'արբենար այս խօսքերէ, եւ Ճօն ու նա, մի եւ նոյն մտածութեամբք միացեալ, մի եւ նոյն յուսով ալ կը միանային այժմ։ Յաճախ տիկին Հէլէնա կը մասնակցէր անոնց խօսակցութեան, բայց անձնատուր չէր լիներ անոնց ցնորական յոյսերուն։ Սակայն կ'զգուշանար տխուր իրականութեան վերադարձնել զայդ երկու դեռատի բարեկամներ։

Նոյն միջոցին Մաք Նապս, Ռոպէրթ, Ոլպինէթ եւ Միւլրատի որսորդութիւն կ'ընէին առանց ջոկատէն հեռանալու, եւ իւրաքանչիւրն իւր որսի բաժինը կը մատակարարէր։ Բականէլ, իւր մորմինէ վերարկուին մէջ փաթթուած, մի կողմ կը կենար մունջ եւ խոկուն։

Եւ սակայն, — պէտք է ըսել, — հակառակ այն բնական օրինաց, որով ամենէն ընտիր բնաւորութիւնք իսկ, երբոր վշտաց, նեղութեանց եւ տառապանաց մէջ ընկնին, կը տխրին ու կը դառնանան, իւր տարաբաղդութեան բոլոր ընկերք՝ միացեալ եւ անձնուէր մնացին, պատրաստ իրարու համար մեռնելու։

Փետր. 25ին, գետակ մ'ելաւ իրենց դէմ, որ Բականէլի քարտէսին մէջ նշանակուած Ուայքարի գետակը պարտէր լինիլ. հուն մը գտնելով՝ անցան։

Թփուտ դաշտերն երկու օր իրարու յաջորդեցին անընդհատ։ Թաւբոյ լիճը ծովեզրէն բաժնող հեռաւորութեան կէսն անցած էին, եթէ ոչ առանց յոգնութեան, գոնէ առանց չար պատահարի։

Յայնժամ երեւցան անհուն եւ անվախճան անտառներ, որք Աւստրալիոյ անտառները կը յիշեցնէին. բայց աստ քաւրիներն եւկալիպտոսաց տեղն անցած էին։ Թէ եւ քառամսեայ ուղեւորութենէ ի վեր իրենց սքանչացումը զարմանալի կերպիւ մաշեցուցած էին, բայց եւ այնպէս, Կլէնարվան եւ ընկերք դարձեալ սքանչացան տեսնելով այն յաղթաբերձ շոճիներն, որք արժանի նախանձորդներն էին Լիբանանի մայրերուն եւ Քալիֆորնիոյ մամութներուն։ Այս քաւրիք, որք բուսաբանական լեզուաւ «ապիէթաւէ տամարին» կը կոչուին, հարիւր ոտք բարձրութիւն ունէին ոստերէ վար։ Ուրոյն պուրակներ կը կազմէին, այնպէս որ անտառն ոչ թէ ծառերէ կը բաղկանար, այլ անթիւ պուրակներէ. որոց սաղարթախիտ հովանոցներն երկու հարիւր ոտք բարձրութեան կը հասնէին։

Այդ շոճիներէն ոմանք, տակաւին դեռատի, հազիւ հարիւր տարեկան, Եւրոպիոյ կարմիր եղեւիններուն կը նմանէին. Թխորակ պսակ մ'ունէին սուր գագաթով մ'աւարտեալ։ Սոցա անդրանիկներն, ընդհակառակն, հինգ կամ վեցհարիւրամեայ ծառեր, անհուն կանաչ վրաններ կը կազմէին իրենց երկճեղքեալ անհամար ոստոց վրայ։ Զէլանտեան անտառին այս նահապետները մինչեւ յիսուն ոտք շրջագծութիւն ունէին, այնպէս որ ուղեւորաց ամենուն թեւերը միանալով չէին կրնար շրջանակել անոնց բունը։

Ուղեւոր ջոկատն երեք օր այդ ընդարձակ կամարներուն տակէն անցաւ կաւոտ գետնի մը վրայէ, զոր մարդկային ոտք կոխած չէր երբէք, ինչպէս որ կը տեսնուէր այն ռետինքեր խէժերուն կոյտերէն որք դիզուած էին քաւրիներուն ստորոտն, եւ երկար տարիներ կրնային բաւել բնիկներուն արտածութեան։

Որսորդք բազմախումբ տարմեր գտան քիվիներու, որք յոյժ հազուագիւտ են Մաուրիներուն յաճախած երկիրներուն մէջ. Զէլանտացւոց շուներէն հալածուելով՝ այս անմատոյց անտառներուն մէջ ապաստանած էին այդ հետաքրքրաշարժ թռչունք։ Ուստի առատ եւ սննդարար կերակուր մը մատակարարեցին ուղեւորաց ճաշերուն։

Մինչեւ իսկ Բականէլ հեռուէն զոյգ մը միթխարի թռչուն նշմարեց խիտ թաւուտի մը մէջ. իւր բնապատումի բնազդումն արթնցաւ. կոչեց ընկերներն, եւ, հակառակ իրենց խոնջութեան, հազարապետը, Ռոպէրթ եւ ինք՝ այդ կենդանեաց ետեւէն ընկան։

Դիւրաւ կը հասկցուի աշխարհագրին բուռն հետաքրքրութիւնը, վասն զի տեսեր էր կամ տեսնել կարծեր էր «մօվայ» կոչուած թռչուններն, որք «տինօրնի»ներուն տեսակին կը վերաբերին, զոր գիտուններէ շատեր անհետացեալ կենդանեաց կարգը կը դասեն։ Արդ, այս հանդիպում կը հաստատէր Պ. Հոխշթեթերի եւ այլ ուղեւորաց կարծիքը թէ Նոր-Զէլանտայի այդ անթեւ հսկայք կը գտնուէին տակաւին։

Այդ մօվաներ, որոց հետամուտ եղած էր Բականէլ, մեգաթերիոնաց եւ պտերոդակտիլոց այդ ժամանակակիցք տասն-ութ ոտք բարձրութիւն պարտ էին ունենալ։ Անհեթեթ եւ վատասիրտ ջայլեամներ էին, վասն զի սաստիկ արագութեամբ կը փախչէին։ Բայց ոչ մի գնդակ չկրցաւ արգելուլ անոնց վազքը։ Քանի մը վայրկեան հալածուելէ յետոյ, աներեւոյթ եղան այդ անըմբռնելի թռչունք մեծամեծ ծառոց ետին, եւ որսորդաց յոգնութիւնն ու վառօդներն ունայնապէս վատնեցան։

Նոյն երեկոյին, մարտ 1, Կլէնարվան եւ ընկերք, վերջապէս դուրս ելնելով քաւրիներուն անտառէն, բանակեցան Իքիրանկի լերան ստորոտն, որոյ կատարն հինգ հազար հինգ հարիւր ոտք բարձրութիւն ունէր։

Յայնժամ հարիւր մղոնի չափ ճամբայ ըրած էին Մաունկանամուէն ի վեր, եւ տակաւին երեսուն մղոն կը մնար ծովեզրին։ Ճօն Մանկլս յուսացեր էր որ տասն աւուր մէջ կրնային կատարել զայս ուղեւորութիւն, բայց յայնժամ չէր գիտեր երկրին ընծայած դժուարութիւններն։

Արդարեւ, ճամբուն պտոյտներն ու խոչերն ինչպէս նաեւ իրենց ուղղութիւնը գտնելու միջոցներուն անբաւականութիւնը մէկ հինգերորդ երկնցուցած էին զայն, եւ՝ դժբաղդաբար՝ ուղեւորք Իքիրանկի լեռն հասած ժամանակ կատարելապէս սպառեալ էին։

Արդ, տակաւին երկու երկայն օրեր քալել պէտք էր ծովեզրը ժամանելու համար. եւ այժմ նոր փութաջանութիւն, ծայրագոյն արթնութիւն հարկ կը լինէր, որովհետեւ այնպիսի երկիր մը կը մտնէին, որ բնիկներն ստէպ կը յաճախէին։

Սակայն, ամենն ալ զսպեցին իրենց խոնջութիւն, եւ հետեւեալ առաւօտ, ուղեւոր ջոկատը ճամբայ ելաւ։

Ընդ մէջ Իքիրանկի լերան, որ աջ կողմ թողուեցաւ, եւ Հարատի լերան, որոյ գագաթը ձախ կողմէ մինչեւ յերեք հազար եօթն հարիւր ոտք կը բարձրանար, ուղեւորութիւնն յոյժ տաժանելի եղաւ։ Տասն մղոն երկայնութեամբ դաշտ մը տարածուած էր, բովանդակապէս ծածկեալ շաղապատուն բաղեղներով, որք «խեղդիչ բաղեղունք», կը կոչուին իրաւամբ։ Ամեն քայլափոխի, ուղեւորաց թեւերն ու սրունքներն անոնց մէջ կը շաղէին, եւ այդ բաղեղներ, ճշմարիտ օձերու պէս, մարմնոյ կը փաթթուէին իրենց գալարուոր մաներով։ Երկու օր շարունակ հարկ եղաւ տապար ի ձեռին յառաջանալ, մարտնչելով այդ հարիւր հազար գլխով հիդրայի դէմ, զոր Բականէլ կրնար կենդանատունկոց կարգը դասել յօժարակամ։

Անդ, այդ դաշտաց մէջ, որսորդութիւնն անհնարին եղաւ, եւ որսորդք չկրցին իրենց սովորական հարկը բերել։ Նպարներն սպառելու վրայ էին եւ կարելի չէր նորոգել. ջուր չկար, որպէս զի ողոքէին իրենց ծարաւը, զոր խոնջութիւնն աւելի կը բորբոքէր։

Յայնժամ Կլէնարվանի եւ ընկերաց տառապանքը սարսափելի եղաւ։ Առաջին անգամ բարոյական կորովը զանոնք լքանելու մօտ հասաւ։

Վերջապէս ոչ եւս կը քալէին, այլ իրենք զիրենք կը քաշէին, անհոգի մարմիններ, վարեալ ինքնապահութեան միակ բնազդմամբ, որ ուրիշ ամեն զգացումներէ աւելի կ'ապրէր, եւ այսպէս հասան Լոթինի հրուանդանը, Խաղաղականի եզերաց վրայ։

Անդ կը տեսնուէին քանի մ'ամայի հիւղակներ, վերջին պատերազմէն աւերեալ գիւղի մ'աւերակներ, լքեալ արտեր, ամեն կողմ աւարառութեան եւ հրդեհի նշաններ։ Անդ՝ դժխեմ բաղդը նոր եւ սարսափելի փորձ մը կը վերապահէր հէք ուղեւորաց։

Ծովեզրին վրայ կը թափառէին, յանկարծ ծովեզրէն մղոնի մը չափ հեռի բնիկներու գումարտակ մը տեսան, որ ասոնց վրայ վազել սկսաւ զէնքերը տատանելով։ Կլէնարվան, ծովէն արգիլեալ, չէր կրնար փախչիլ, եւ իր վերջին ուժն ամփոփելով կռուելու կը պատրաստուէր. յանկարծ Ճօն Մանկլս գոչեց.

— Մակո՛յկ մը, մակո՛յկ մը։

(Շարունակելի)

թիւններով, և Պերլինի դաշնագիրն ստորագրող Տէրութիւնք ևս խօսք տըւած են Թուրքիոյ՝ պահպանել իրաց կացութիւնն յիշեալ դաշնագրին պայմանագրութեանց համեմատ :

«Կը կրկնենք թէ դաշնագիրք չպիտի ոչնչացուին յեղափոխական ճանապարհով, և թէ նոցա փոփոխման համար կայ օրինաւոր ճանապարհ մը քննութեան : Սակայն միանգամ ընդ միշտ ապացուցուած է թէ կարելի չէ անփոփոխ պահպանել Պերլինի դաշնագիրը քանի որ ունի շատ թերութիւններ : Տէրութիւնք պարտէին չտկել այդ թերութիւններ, և ո՛չ թէ անտարբերութեամբ ականատես լինել այս անհեթեթութեանց զոր կը պարունակէր Պերլինի դաշնագիրն : Բանի որ այն ժամանակ թերի մնացին տէրութիւնք իրենց պարտականութեանց մէջ, այլ ևս թող չը գոչեն, թող չը բողոքեն դաշնագրի բռնաբարման դէմ հիմնուելով այն վարդապետութեան վրայ, որ դաշնագրութեանց սրբութիւնն և անմատչելի լինելը կը դաւանի : Հարկ չը կայ դէպքերու բնական ընթացքը կասեցնել և դաշնագիրք պարտին զօրացնել զայն և ոչ թէ կասեցնել :

Թէ ինչ ընթացք պարտի բռնել Ռուսիա յեղափոխութեան նկատմամբ ահաւասիկ Կատկէի, Ռուսկիյ Վեդոմոստիի և Մոսկուայի մի քանի այլ նշանաւոր լրագրաց կարծիքը :

«Ռուսիա, միւս տէրութիւններէն աւելի պարտաւոր է չէզոք դիրք բռնել այս խնդրոյ մէջ և լոկ ականատես մը լինել: Եւրոպայի քաղաքական խաղաղութիւնը վրդովող այս շարժում ուղղակի արդիւնք է պուլղարական այն ազատութեան որ ռուսական զինու զօրութեամբ ստացուեցաւ : Մեր ձեռքին գործն է այս և սորա համար թափուած է մեր արիւնը : Ուստի որքան շատ հետաքրքրուինք նորա ելքով այնքան աւելի ևս պատասխանատու պիտի լինինք նորա համար»

«Տակաւին չը գիտցուիր թէ մինչև ո՛ւր պիտի հասնին գործերն . սակայն յուսանք միայն որ մենք առանց նորանոր զոհողութեանց դուրս կուգանք այս դժուարին կացութենէն, հաւատարիմ հանդիսանալով Ռուսիոյ քաղաքականութեան դարաւոր սկզբանցն»

«Արդէն շատ անգամներ խօսած ենք Պերլինի դաշնագրի անյարմարութեանց և փոփոխման պէտքին վրայ : Պալքանեան թերակղզւոյն բազմաչարչար ժողովուրդն արդէն շատ արիւն թափած է դիւանագէտներու սխալանաց համար : Հարկ անհրաժեշտ է որ եւրոպական Տէրութիւնք անմիջապէս դեսպանախորհուրդ մը կազմեն փոփոխելու համար Պերլինի դաշնագիրն և ընդունելու Արեւելեան Ռումէլիի միացումը Պուլղարիոյ հետ : Կը կարծենք թէ այս դեսպանախորհրդի մէջ Ռուսիա պարտի Ռումէլիցիներու ու Պուլղարներու պաշտպանի դերն ստանձնել :

Նովոյէ մեծ աղէտ մը չը գուշակեր այս դէպքերէն և կը յայտէ թէ այս քայլ այնքան վտանգաւոր չէ եւրոպական խաղաղութեան վրդովելու համար, որքան կ'երեւի առաջին անգամէն :

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԱՅՍ ԱՒՈՒՐ ՆԻՍՏԸ

(ԽՆԴԻՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ)

Ազգ. Երեսփոխանական Ժողովը ի գաղտնի նիստ գումարեցաւ այս առաւօտ Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյն մէջ, ընդ նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր և Ատենապետութեամբ Վսեմ. Տիգրան էֆէնտի Յուսուֆեանի : Ներկայ էին իբր վաթսուն Երեսփոխանք :

Ժողովը, յետ լսելոյ Էջմիածնայ Ս. Սինոդի կողմէ օգոստ. 24 թուով առ Ամեն. Ս. Պատրիարք Հայրն ուղղեալ հեռագիրն ինչպէս նաև պաշտօնագիրն որք կը ծանուցանէին Վեհ. Տ. Մակար Ս. Արքեպիսկոպոսի հաստատումն ի կաթողիկոսութիւն ամենայն Հայոց, հակիրճ վիճաբանութենէ մը յետոյ՝ որոշեց Ցանձնաժողով մ'ընտրել ընդ նախագահութեամբ Ս. Պատրիարք Հօր, պաշտօն տալով նմա քննել կաթողիկոսական խնդրոյն պարագաներն և առաւելն 15 օրէն տեղեկագիր մը մատուցանել առ Ազգ. Ժողովն : Երեսփոխանք ազատ են մինչև մէկ շաբաթ իրենց կարծիքներն ու դիտողութիւններն յայտնել Ցանձնաժողովին :

Այս որոշում տրուեցաւ միաձայնութեամբ ընդդէմ 3 քուէից, յետ որոյ Ցանձնաժողովն կազմուեցաւ հետևեալ կերպիւ .

Անուանք Ցանձնաժողովոյն

Տ. Խորէն Արքեպիսկ. Նար-Պէյ
Տ. Մատթէոս Եպիսկ. Իզմիրլեան
Տ. Յակոբ Ծ. վարդ. [illegible]
Տ. Յովհաննէս աւագ քահանայ Մկրեան
Գաբրիէլ էֆ. Նորատունկեան
Յարութիւն » Մերէնտիւլլի
Յովհաննէս » Թիրոսեան
Կարապետ » Ութուճեան
Մարկոս » Աղաբէգեան
Ստեփան » Փափազեան
Տոք. Յարութիւն » Թիրեաքեան
Յակոբ » Գուրգէն

ՄԱԿԱՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ

Ահաւասիկ Քիշնեւի նկարագրական թղթակցութիւնն զոր մեր երեկի թուով խոստացած էինք հրատարակել :

ՔԻՇՆԵՒ, 12 Սեպտ.

Ամսոյս 9ին երեկոյեան ժամը 6ին ողջամբ ժամանեցին Քիշնև Սինոդի Սրբոյ էջմիածնի և Մայր Աթոռոյ միաբանութեան հրաւիրակներ Ամեն. Սրբազան Գրիգոր Արքեպիսկոպոս Սադինեանց, կառավարիչ թեմին Հայոց Ղարաբաղու, և Գեր. Սրբազան Յովակիմ Եպիսկոպոս, Անդամ Սինոդին Սրբոյ էջմիածնի, ունելով իւրեանց հետ բարեկրօն Տէր Համազասպ աւագ քահանայն Տէր Աւետիքեանց և երկու կաթուղիկոսական Շաթիրներ . Սրբազան հրաւիրակներին դիմաւորեցին Քիշնեւի կայարանը տեղական հոգևորականաց դասը և խուռն բազմութիւն հայազգի ժողովրդոց քաղաքիս երկուց սեռից : Կայարանէն Սրբազանները նստելով յառաջուց պատրաստուած կառք դիմեցին ուղղակի էջմիածնական կալուածոյ մէջ գտնուած, յատուկ նոցա համար կահաւորուած բնակարանը, որը կը գտնուի դէմ յանդիման փառաւոր նորաշէն Առաջնորդարանի վիճակիս Հայոց Նոր-Նախիջևանի և Բեսարաբիոյ, յորում և ունի իւր բնակութիւն Նորին Վեհափառութիւն Սրբազնագոյն Կաթողիկոսն ամենայն Հայոց :

Հետևեալ օրն ամսոյս 10ին կանուխ առաւօտեան սկսան հետզհետէ ժողովուիլ հրաւիրակ Սրբազաններու բնակարանը տեղական հոգևորականաց դասը, կարեւոր պատրաստութիւնք տեսնելու Վեհ. Հայրապետին ներկայանալու համար, իսկ քաղաքիս ազգայնոց ականաւոր իշխանները ուղղակի ի Վեհարան ամէնքն ալ սրտատրոփ և լցեալ անպատում խնդութեամբ որ արժանի պիտի լինէին տեսնելու մի փառաւոր իսկ հայկական հանդէս, որոյ վրայ հասկացողութիւն անգամ չունէին :

Ժամը 11ին մի քառորդ մնացած, Վեհ. Հայրապետը բարեհաճեցաւ ելնել իւր Ներսի սենեակներէն և մտաւ ընդունարանը, ուր անմիջապէս հրաւիրուեցան ազգային իշխանները և մի փոքր միջոց մխիթարուեցան Նորին Սրբութեան պատկառելի և քաղցրաժպիտ տեսութեամբ և խօսակցութեամբ : Ցետոյ Նորին Վեհափառութիւնը բարեհաճեցաւ յայտնել Հրաւիրակ Սրբազաններուն տեղական աւագ Երէց քահանայի միջոցաւ թէ ինքը պատրաստ է ընդունել զնոսա :

Ճիշդ ժամ 11ին Հրաւիրակ Սրբազաններն հագած իւրեանց փիլոններ և բոլոր ունեցած նշաններով զարդարած իւրեանց կուրծքեր, ունելով առաջներից երկու կաթուղիկոսական Շաթիրներ իւրեանց պատմական ծիրանեգոյն համազգեստներով, ձեռքերնին բռնած Պարսկական Շահերից ընծայուած [illegible]ներ, յետոյ երկու կարգ շարուած դպրաց դասը ուրարները ուսերնին ձգած, չորս քահանայք փիլոններ առած, յորոց միոյն ձեռք կաթուղիկոսական Խաչ և միւսին Հովուապետական Գաւազան, որք յառաջապէս բերուած էին Մայր Աթոռէն, յետոյ էջմիածնական կալուածոց կառավարիչ բարեխնամ Կարապետ վարդապետ, յամրընթաց քայլերով դիմեցին ուղղակի Վեհարան, որոյ դռները բաց էին ընդունելու այդ չքեղ գնացք : Երբ որ հասան ընդունարան, ուր էր Վեհ. Հայրապետն իւր շուրջն ունելով յոտընկայս ազգային իշխանները, ամէնքը գլուխները խոնարհելով ողջունեցին և կանգնեցին Վեհ. Հայրապետի առջևը, որ նոյնպէս ոտքի վերայ կանգնած կայր, և իւրաքանչիւր ոք կալաւ իւրեան յարմարաւոր տեղը յաջմէ ունելով Հովուապետական Գաւազանը և յահեկէ կաթուղիկոսական Խաչը, իւրեանց վերայի դեղանկար և ասղնէգործ քօղերով :

Ալեզարդ Գրիգոր Սրբազան վերցուց իւր գլխի վեղարը և ձախ ձեռքի վերայ բռնած՝ մատեան յաջ և աջ ձեռքը դրած կուրծքին վերայ կրկին խոնարհեցաւ և ասաց հետևեալ խօսքերն ի դէմս Նորին Վեհափառութեան յուզուած սրտիւ և դողդոջուն ձայնիւ .

Վեհափառ Տէր,

Աստուածընտրեալ Հայրապետ .

«Ես և իմ միաբանակից եղբայր Գեր. «Յովակիմ եպիսկոպոս եկած ենք ի դիմաց «Սինոդի Սրբոյ էջմիածնի և Միաբանու-«թեան Մայր Աթոռոյ հրաւիրել զՁերդ «Վեհափառութիւն գալ բազմիլ ի գահ «Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի, «յաղագս որոյ ահա կը մատուցանենք Ձեր «Վեհափառութեան այս սուրբ խաչն կա-«թողիկոսական և այս հովուապետական «գաւազանս» :

Առնելով այս խօսքեր առաւ Սրբազանը Տէր Համազասպ քահանայի ձեռքէն Հովուապետական Գաւազանը եւ քայլելով դէպ ի Վեհ. Հայրապետն մատոյց զայն Նորին Սրբազնութեան խորին յարգանօք և համբուրեց սրբոյ Աջոյն, և ապա դառնալով իւր նախկին տեղն շարունակեց ասել .

«Վեհափառ Տէր . վերջին ժամանակ-«ներս մեր սիրելի ազգայնոց մեծագոյն «մասը կարծում էր թէ՝ երկինքը միշտ մը-«ռայլ և մառախլապատ պիտի մնայ մեր «ազգին առաջ, կարծում էր թէ՝ իւր սու-«գը չպիտի փարատի երբէք և կուլար ան-«մխիթար, բայց որովհետև «Սիրտ Թա-«գաւորի ի ձեռին Աստուծոյ են,» այսպէս «և ահա՛ Ամենողորմած կամօք Նորին ԿԱՅ-«ՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ՕԳՈՍՏԱՓԱՌ «ԹԱԳԱՒՈՐ ԿԱՅՍԵՐՆ մերոյ փարատեցաւ «այժմ այդ սուգ, պարզեցաւ երկինք եւ «սփռեցաւ մեր Ազգի վերայ լոյս և ցնծու-«թիւն : Այժմ Դուք էք, Վեհափառ Տէր, «մեր ազգի լուսատու աստղը, Դուք էք «մեր սրտերի միակ յոյսը և ապաւէնը և «մեք ամենեքեանքս հարուստ յուսով կամք «և մնամք թէ՝ Ձեր Հայրապետութիւնն «պիտի լինի օգտակար և փառաւոր մեր «ազգի համար և մեք միաբանական եղ-«բարբք հանդերձ պիտի մխիթարուիմք Ձեր «հայրական գութը և խնամքը վայելելով : «Կը մնայ մեզ ուրեմն ջերմագին աղօթքներ «վերառաքել առ Բարձրեալն Աստուած, «որպէս զի պարգևէ Ձեր Վեհափառու-«թեան ոյժ, կարողութիւն և առողջու-«թիւն և շնորհէ մեզ Ձեր թանկագին կեան-«քըն ընդ երկայն աւուրս ուղիղ վարդապե-«տութեամբ » :

Նորին Սրբազնութեան այս խորհրդաւոր և գեղեցիկ խօսքեր այնպիսի քաղցր տպաւորութիւն գործեցին ունկնդրաց վերայ, այնպիսի մի անօրինակ վեհութիւն տուին այդ հրաւիրանաց հանդիսին, մանաւանդ այդ նշանաւոր վայրկենին, երբ մատոյց Նորին Վեհափառութեան Հովուապետական Գաւազան, որ շատերի աչքերէն եկան հոսիլ յորդառատ արտասուք ուրախութեան և ոգևորութեան: Այլապէս կարող չէր լինել . Հայ սիրտը չէր կրնար անտարբեր աչօք նայիլ այդ չքնաղ և սքանչելի հանդիսին վերայ, առանց պահ մը սրտով և հոգւով չյափշտակուելու անցեալ ժամանակների փառաւոր և քաղցր յիշատակներով :

Նորին Վեհափառութիւնն իսկ անտարբեր չմնաց . Նորա վերայ ևս մեծ տպաւորութիւն գործեցին այս հանդէս և Հրաւիրակ Գրիգոր Սրբազանի գեղեցիկ խօսքեր . իսկ երբ ստացաւ Նորա ձեռքէն Հովուապետական Գաւազանը, նշմարելի էր թէ ո՛րքան յուզեալ էր այն պահուն Նորին Սրբութեան փափուկ սիրտ և հոգի, և ի՛նչ փառաւոր, ի՛նչ վսեմ, վեհ և պատկառելի էր այդ վայրկենին Նորին Վեհափառութեան կերպարանք :

Երբ վերջացոյց Գրիգոր Սրբազան իւր ատենաբանութիւն, Սրբազնագոյն Կաթողիկոսն յոտնկայս Հովուապետական Գաւազանը ձեռքին ի դէմս Հրաւիրակ Սրբազաններին պատասխանեց այսպէս .

«Ձեր պատուաւոր հրաւիրակութիւնն՝ «արդէն կը յիշեցուցանէ ինձ այն ծանր «ծանր Հայրապետական պարտաւորութիւն-«ներն, զորս երկինք դրին ինձ վերայ . Ես «ի նկատի ունելով իմ ծերութեան հասակ «և իմ անձնական տկարութիւն չէի փութա-«նար խոստանալ թէ կարեմ լիովին լը-«ցուցանել Սուրբ եկեղեցւոյ և սիրելի Ազ-«գիս բազմակողմանի պահանջքն և պի-«տոյս . բայց եթէ այն Տիրական ձայնն որ «երբեմն կը քաջալերէր զՄեծ Առաքեալն «Պօղոս խրախուսէ և զիս յասելն «Բաւ-«ական է քեզ շնորհք իմ, զի զօրութիւն իմ ի «տկարութեան կատարի », այն ժամանակ «յուսամ թէ Աստուածային օժանդակու-«թեամբ կարեմ մասնաւորապէս արդարա-«ցուցանել Ազգի և Եկեղեցւոյ յոյսը և ա-«կնկալութիւնքը : Ուրեմն կը խնդրեմ «աղօթեցէք առ Աստուած զօրացուցանել «իմ հոգեկան և մարմնական կարողութիւնս, «որ որպէս զի մաքուր առանց ամօթոյ լինիմ «առաջի Աստուծոյ, առաջի Ազգիս Հայոց «և առաջի Առաքելական Սուրբ Եկեղեցւոյ «Նորին » :

Ցետոյ Սինոդի անդամ Սրբազան Յովակիմ եպիսկոպոս մատոյց Նորին Վեհափառութեան Ս. Սինոդի պաշտօնական թուղթը, զոր հրամանաւ Վեհափառին վիճակային կոնսիստորի Ատենադպիրը բարձրաձայն կարդաց ի լուր ամենեցուն և որ ունէր զայս օրինակ .

Նորին Վեհափառութեան
Ծայրագոյն Պատրիարքի և Կաթողիկոսի
Ամենայն Հայոց Տեառն Տեառն ՄԱԿԱՐԱՅ
Ի Լուսաւորչական Հայոց Սինոդէ
Սրբոյ Էջմիածնի
Ցայտարարութիւն

Ցինոդս նշանակեալ զկառավարիչ թեմին Հայոց Ղարաբաղու զԲարձր Սրբազան Գրիգոր Արքեպիսկոպոս Սադինեանց և զԱնդամ Սինոդիս զՍրբազան Յովակիմ եպիսկոպոս Տէր Գրիգորեանց ի պաշտօն հրաւիրակութեան ի դիմաց Անդամոց Սինոդիս և միաբանութեան Մայր Աթոռոյս ուղևորեաց յառաջ Ձերդ Վեհափառութեան առ ի հրաւիրել զՁերդ Սրբութիւն յԱթոռ Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի :

Իսկ մեք և համայն ուխտ միաբանութեան, աղաչեմք զամենարարին Աստուած զի յաջողեսցէ Ձեզ անփորձ և անվտանգ հասանել ի Մայր Աթոռս ի Ս. Էջմիածին :

Տեղակալ Ատենապետի Սինոդի
Մկրտիչ Արքեպիսկոպոս
Անդամք
Մեսրովբ Եպիսկոպոս   Երեմիա Եպիսկոպոս
Ներսէս »   Մամբրէ »
Ատենադպիր Ս. Մուշեղեանց
Համար 2596
ի 28 օգոստոսի 1885 ամի
ի Ս. Էջմիածին

Այնուհետեւ հոգեւորական դասը խոնարհելով առաջի Նորին Վեհափառութեան և համբուրելով Նորա Սուրբ աջը դուրս եկան ընդունարանէն, ուր մնացին ըստ հրամանի Վեհափառին միայն հրաւիրակ Սրբազաններն, որք իշխաններուն հետ ծանօթանալուց զկնի, վայելեցին Վեհափառին հետ նոյն միջոցին մատուցուած սուրճը և ապա ամենեքեան հրաժեշտ տուին և գնացին իւրեանց տներ :

Այսպէս վերջացաւ այս գեղեցիկ հանդէս հրաւիրանաց որ մի տարօրինակ մխիթարական տպաւորութիւն գործեց ամէնքի վերայ և իւրաքանչիւր ոք զմայլած, հիացած և ոգևորուած բերնէ բերան սկսան պատմել իրարու իւրեանց տեսածը և լսածը և հանդիսի փառաւորութիւն և չքեղութիւն :

Ամեն. Ս. Պատրիարք Հայրն երէկ Բ. Դուռն երթալով՝ տեսակցեցաւ դատական գործոց Վսեմ. Նախարարին հետ :

Ցառաջիկայ կիւրակէ, 22 սեպտ., Ամեն. Խրիմեան Ս. Հայրիկ հանդիսաւոր Ս. պատարագ պիտի մատուցանէ Պօյաճը գիւղի Ս. Երից Մանկանց նորաշէն եկեղեցւոյն մէջ :

Հայ-Հռովմէականաց Պատրիարք Գեր. Ազարեան Սրբազանն երէկ Բ. Դուռն երթալով տեսակցեցաւ Արտաքին գործոց Նախարարի խորհրդական Տատեան Վսեմ. Ցարութիւն էֆէնտիի հետ :

Կը լսենք թէ Հաճնոյ ամուսնական խնդրոյն առթիւ հանրածանօթ եղած Գըրգաշարեանց գժբախտ ընտանիքին բոլոր անդամներն — 17 հոգիք — բողոքագիր մը ղրկած են շաբթուս մէջ առ Ազգ. Երեսփ. Ժողովն և դարձեալ հեռագրաւ մը հաստատած են իրենց այս բողոքը, որով կը պնդեն իրենց ծանուցեալ արդար դատին վրայ, յայտնելով թէ իրենց աղջիկը (Նարկիզ) ամենեւին դոհ չէ բռնի ամուսնութենէն . թէ բռնութիւնն ապացուցեալ իրողութիւն մ'է և կը շարունակէ . թէ իրենք արդարութիւն չեն կրնար գտնել ի Հաճըն . և թէ դատն Ազգ. Պատրիարքարանի կամ ուրիշ դատարանի առջեւ վարելու համար իրենց կողմէ փոխանորդ կարգած են Զաքարեան Ստեփան էֆէնտին, (զոր՝ ինչպէս յայտնի է՝ Կիլիկիոյ Կաթողիկոսն Ատանայէն հեռացնել տուած էր՝ իւր յոռի վարչութեան դէմ գործելուն առթիւ .)

ԵՐԿՐԱԳՈՒՆՏ օրաթերթի թիւն հրատարակեցաւ հետևեալ պարունակութեամբ .

Հայկական նշանագիրք . — (Ս[illegible] Վ. Պ[illegible]) : Շողեր եւ Ցօղեր . — ([illegible]) : Լուռ Պարտամունք . — ([illegible]) : Ալեւորական համաշխարհիկ լեզու . — ([illegible]) : Զայնք ի միոյ նուիթեան . — (Յ. Սեթեան) : Թռչակք . — ([illegible]) : Ծագիկ եւրոպական դրականութեան . — Մանիլակ . — ([illegible]) : Հընախօսական . — ([illegible]) : Մեռեալներն . ([illegible]) : Աղջկան մը օրագիրն . — (Մելանի) : Կինն . — ([illegible]) :

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Արքունի Թնդանօթարանի վերատեսչութեան փոխանորդ անուանեցաւ Թնդանօթարանի գործարանաց տեսուչ Ֆերիգ Սայիտ փաշա :

Հանգստեան Թոշակի Սնտուկին գանձապետ Եօմեր էֆէնտի Նիզամական Գանձուն առաջին գանձապետ անուանեցաւ :

Մէճիտիէի ականակուռ պատուանշան շնորհուեցաւ Պաղտատի Նաքիպ-իւլ-Էշրէֆ Սէյտ Սէլման էֆէնտիի :

Երկրորդ կարգի Մէճիտիէ' Իրէկի կեդրոնական հրամանատար Միրլիվա Իսկէնտեր փաշայի :

Արքունի Թնդանօթարանի գործարանաց վերատեսուչ անուանեցաւ [illegible] Միրլիվա և Մուվիլին խորհրդոյ նախագահ Ֆաիք փաշա :

Ատայի նորընտիր կուսակալ Րաիֆ փաշա երէկ Կայս. պալատն երթալով իւր շնորհակալութիւններն յայտնեց :

Բարձր Մեծ-Եպարքոսը, իւր հետն ունենալով Արտաքին գործոց նախարարի խորհրդական Տատեան Վսեմ. Ցարութիւն էֆէնտին, այսօր մայրաքաղաքիս բոլոր օտար տէրութեանց դեսպաններուն փոխադարձ այցելութիւն պիտի տայ :

Անգլիական արտասովոր պատուիրակ Սըր Ուոլֆ, դեսպանատան թարգման Պ. Մարինիչի հետ երէկ Բ. Դուռն երթալով, Բարձր. Մեծ-Եպարքոսին, Պետական Խորհրդոյ Նախագահ Վսեմ. Արիֆի փաշայի և Արտաքին գործոց նախարարի խորհրդական Տատեան Վսեմ. Ցարութիւն էֆէնտիի հետ մասնաւոր տեսակցութիւն մ'ունեցաւ :

Իտալական դեսպանատան առաջին թարգմանն երէկ յատուկ հրաւիրանօք Բ. Դուռն երթալով, Արտաքին գործոց նախարարի խորհրդական Տատեան Վսեմ. Ցարութիւն էֆէնտիի հետ տեսակցութիւն մ'ունեցաւ :

Ռուսական, աւստրական, հելլենական և ռումանական առաջին թարգմանք երէկ Բ. Դուռն երթալով տեսակցեցան Վսեմ Տատեան Ցարութիւն էֆէնտիի հետ :

Կը հաստատուի վերջապէս այն լուր թէ անգլիական նաւատորմը հրաման ստացած է Զմիւռնիոյ նաւահանգիստն երթալ :

Արտաքին գործոց նորընտիր նախարար Սայիտ փաշա երէկ իրիկուն Պերլինէն ճանբայ ելած է մայրաքաղաքս գալու համար :

Թայմզ կը ծանուցանէ թէ Փարիզի օսմ. դեսպան Էսատ փաշա իւր պաշտօնը պիտի շարունակէ :

Հանրային կրթութեան Նախարար Մունիֆ փաշա երկու երեք օրէն մայրաքաղաքս կը հասնի :

Սուրիոյ Նահանգին կուսակալ Նաշիտ փաշա, և Ատանայի կուսակալ Րաիֆ փաշա երէկ աւստրիական [illegible] շոգենաւով իրենց պաշտօնատեղին ուղևորեցան :

Գերմանական դեսպան Պ. Ռատովիծ իւր օրինական Թարապիայի [illegible] առջևէ կրացնելէ յետոյ, ցամաք ելաւ երէկ առաւօտ և Բերայի դեսպանատունը գնաց, ընկերակցութեամբ Տիկին Ռատովիծի որ շոգենաւ գնացած էր իւր ամուսինը դիմաւորելու :

Դեսպանատան և հիւպատոսարանի պաշտօնեայք խմբովին ընդ առաջ գընացին Պ. Ռատովիծի, բարի գալուստ մաղթելու :

Գերմանական դեսպան Պ. Ռատովիծ Թարապիայէն ելնելով ուղղակի Բ. Դուռը գնաց երէկ և Բարձր Մեծ-Եպարքոսին և Արտաքին գործոց Նախարարի փոխանորդին հետ տեսակցութիւն մ'ունեցաւ :

Եգիպտոսի չուէտական գործակատար Պ. Հէյնտէնսթամ որ երեք ամսէ ի վեր մայրաքաղաքիս դեսպանատան գործերը կը վարէր ի բացակայութեան դեսպանին, տիկնոջն հետ մեկնեցաւ Ալեքսանդրիա :

Դեսպանատան և հիւպատոսարանի բոլոր պաշտօնեայք և դեսպանական մարմինք շոգենաւ գնացին . Նոյնպէս անգլ. արտասովոր պատուիրակ Սըր Ուոլֆ շոգենաւ գնաց Պ. Մարինիչի հետ բարի երթ մաղթելու Պ. և տիկին Հէյնտէնսթամի :

Առողջապահական խորհուրդը պաշտօնական ազդով կը ծանուցանէ թէ ներկայ ամսոյս 18էն սկսեալ, Վառնայէն և Թրիէսթէէն եկող շոգենաւուց ուղեւորք 48 ժամ, իսկ Քէօսթէնճէի, Դանուբի և Օտեսայի նաւահանգիստներէն եկողները 24 ժամ քարանթինայի պիտի ենթարկին :

Եգիպտական Էլ-Լաման լրագիրը կը հրատարակէ հետեւեալ նամակը զոր Սէնուսիներու Շէյխն ուղղեր է սուտանեան ցեղերու գլխաւորներուն .

Կը դիմեմ Սուտանի ցեղապետներուն՝ իբր ամեն անոնց որք կը յարգեն և կը կրեն իսլամական հաւատքը :

Աստուած ըսաւ Գրքին մէջ . «Հնազանդեցէ՛ք առ Աստուած, առ Մարգարէն եւ առ այն որ կը կառավարէ զձեզ :»

Հաւատացէ՛ք երկնաւոր բանին և հնազանդեցէք նմա . խոյս տուէք սխալանաց շաւղէն որուն կը հետեւիք և որ անմիաբանութիւն պիտի ձգէ ի մէջ Իսլամաց :

Ցարգեցէք Խալիֆին իշխանութիւնն . — Այս է կամք Տեառն :

Հաւատացէ՛ք ինձ և իմ պաշտօնիս : Ցիշեցէ՛ք թէ Խալիֆը ներկայացուցիչն է Խալիֆային և թէ հնազանդութիւն պարտիք նմա ինչպէս Խալիֆային :

Իւր ներողամտութեան մէջ, նա չուզեց պատժել . ողորմած՝ որպէս պարտի լինիլ ամեն ճշմարիտ իսլամ, ազդարարութիւն մը կ'ուղղէ ձեզ . եթէ ունկն չի դնէք, իրաւունք ունի պատերազմ մղելու ձեզ դէմ : Արդ, Գրքին մէջ ըսուած է . «Եթէ հաւատացելոց երկու ազգեր մարտնչին միմեանց դէմ, հարկ է որ մեր հաւատացեալք աշխատին խաղաղութեան հաստատման, եւ եթէ անոնցմէ մին մերժէ այս միջամտութիւնն, ամենքնիդ զինուեցէք անոր դէմ, զայն ջախջախելու համար :

Ահաւասիկ ինչ որ կ'ուզէի ըսել ձեզ, իբր ճշմարիտ իսլամ : Եթէ հնազանդիք, ձեր վարձքը կը գտնէք . եթէ ոչ, չարչարանք, վիշտ և դառնութիւն միայն կը մնան ձեզ :

(Մէհմէտ Օսման)

ՊՈՒԼԿԱՐԱԿԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆ

Նախընթաց թուով մը, մեր մասնաւոր տեղեկութեանց վրայ յենլով, ծանուցինք թէ Պ. Հիրշ հեռագրած է Երկաթուղեաց Տնօրէնութեան ի Կ. Պոլիս, որպէս զի օսմ. կառավարութեան դէպ յԱրեւ. Ռումէլի ղրկել ուզած զօրքերն ու ռազմամթերքը փոխադրելու համար կանխիկ դրամ չպահանջէ :

Կ'իմանանք թէ Ընկերութիւնն յանձն առած է միանգամայն սովորականէն կէս գինով կատարել այդ փոխադրութիւններն և չորեքշաբթի օրն հրահանգ ղրկեր է Կ. Պոլսէն յԱդրիանուպօլիս և Տէտէ Աղաճէն ի Գուլէլի Պուրկազ գտնուող բոլոր կայարանաց, որպէս զի եթէ օսմ. իշխանութիւնք իրենց դիմեն զօրաց և ռազմամթերաց փոխադրութեան համար ու Սպարապետութեան կողմէ յանձնուած օրինաւոր Մազպաթայ մը ներկայացնեն, խնդրուած փոխադրութիւնք կատարուին, ետքէն հաշուակցելու պայմանաւ :

Նոյն տրամադրութիւնք պիտի գործադրուին նաև Սէլանիկ-Իւսկիւպ-Միթրովիցայի գծին վրայ :

Սպարապետութիւնը 4000 զօրաց անկողին պատրաստել տուեր է, Մուսթաֆա-Փաշայի օսմ. բանակը ղրկելու համար :

Կը հաստատուի այն լուր թէ Ադրիանուպոլսոյ կուսակալն արգիլեր է ցորենի և արմտեաց արտածութիւնն : Այս որոշում տրուած է գաւառին վարչական ժողովոյ մէջ և պիտի գործադրուի Կ. Պոլիս ղրկուելիք ապրանաց համար ևս :

Մաս մը արմտիք որք պատրաստուած էին հրամանագիրն ելած վայրկենին, ճանբայ հանուած են բացառիկ արտօնութեամբ, սակայն այնուհետեւ ամենախիստ հրահանգներ տըրուած են որ ի՛նչ քանակութեամբ ցորեան իսկ դուրս չհանուի գաւառէն :

Այս աւուր Թայմզի մէջ կը կարդանք .

Երէկ երկու կարեւոր գրոյցք շըրջեցան մայրաքաղաքիս մէջ : Առաջինն էր Պուլկարիոյ իշխանին իւր նախարարաց հետ Փիլիպպէէն Պուլկարիա քաշուիլն, և զՏօքթէօռ Ստրանսքի, արտասովոր Քոմիսէրի տիտղոսով, ի Փիլիպպէ թողած լինելն . Երկրորդ թէ իշխանը Փիլիպպէէն մեկնած է, բայց չը գիտցուիր թէ ո՛ւր :

Մայրաքաղաքիս ռումանական դեսպանը, իւր կառավարութենէն ստացած հրամանի մը համաձայն, պաշտօնապէս հերքած է այն լուր թէ Ռումանիոյ, Սերպիոյ և Յունաստանի միջև համաձայնութիւն մը գոյացած է :

Վառնայէն, Ռուսճուքէն և այլ քաղաքներէ առնուած մասնաւոր տեղեկութիւնք կը հերքեն այն լուր թէ ռուս կամաւորներ այդ քաղաքներէն անցնելով ի Պուլկարիա կ'երթան :

Սոֆիայէն կը հեռագրեն [illegible] լրագրոյն .

Փիլիպպէէն եկող անձինք կը հաւաստեն թէ Արեւ. Ռումէլիի մէջ 30,000 զինուորք կան որոց 18,000ը կը պատկանին Քաղաքապահ գնդին :

Կը հաւաստեն (թէև չկրցայ դեռ ստուգել) թէ պուլկարական բանակը կը բաղկանայ 52,000 հոգիէ :

Այսօր 1500 կամաւորք ուղեւորեցան ի Փիլիպպէ :

Սոֆիայէն գնացած են արդէն 9500 կամաւորք :

Զինուորագրութիւնք կը շարունակուին :

Չորս վաշտէ բաղկացեալ պուլկարական զօրագունդ մը գրաւեց սերպիական սահմանագլուխն Բաժքով-Սիւվաթի երկայնութեամբ, դէպ ի Պաչէն-Նօո (Բրայկուէվածի շրջանակին մէջ) :

Տեղական լրագրաց մէջ այլ ընդ այլ զրոյցներ հրատարակեցան Փիլիպպէի կայարանապետ Պ. Սփօրձայի նկատմամբ, որոյ համար ըսուեցաւ իսկ թէ մեռած է : Ճշմարտութիւնն այն է թէ Պ. Սփօրձա ողջ առողջ էր սեպտ. 10/22ին : Թօրթըր հազարապետն հետեւեալ կերպիւ պատմած է ֆրանսերէն լրագրոյ մը ներկայացուցչին, այդ զրոյցներու տեղի տուող պարագաներն :

Փիլիպպէի նամականան պետ Պ. Թէոտորոֆ չուզելով հնազանդիլ առժամեայ կառավարութեան հրամանաց, հազարապետ Բայչօ Նիքօլայեֆ՝ անդամ այդ կառավարութեան և տնօրէն քաղաքապահ զօրաց վարչութեան դիւանին, քովը գնաց զայն ձերբակալելու համար, և ըսաւ . «Եթէ չես ուզեր հնազանդիլ, բռնութեամբ պիտի հնազանդեցնենք » — Ի՛նչ, գոչեց Պ. Թէոտորոֆ, ես բռնութեա՛ն հնազանդիմ — եւ ռեվօլվէր մը հանելով գրպանէն, երեք հարուած պարպեց սպայն վրայ որ ծանրապէս վիրաւորեցաւ և մեռաւ յաջորդ օրը, Պ. Թէոտորոֆ սրճարանի մը մէջ ապաստանեցաւ, ուր ո՛չ ոք կը համարձակէր մօտենալ անոր։ Վերջապէս զինուոր մը ներս մտնելով, հրացանի հարուածով մը սպաննեց մարդասպանը։ Ցայնժամ ամբոխը ներս խուժելով, յօշոտեց Թէոտորոֆի դիակը. այս պաշտօնեայ արդէն իսկ ատելի դարձած էր ժողովրդեան իւր յոռի վարմանց պատճառաւ։

Նէքրոլյէֆ հազարապետը թաղուեցաւ զինուորական պատիւներով։

Այս պատմութենէն կ'երեւի ահա թէ նամակատան պետ Պ. Թէոտորոֆն է սպանողը, և ո՛չ թէ կայարանապետ Պ. Սֆորձա։

ՅՈՒՆԱՍՏԱՆԷՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ ծանուցինք թէ Յունաստանի պատերազմական Նախարարին հրամանաւ, պահեստի երկու գունդեր ի զէն կոչուած են։ Այդ գունդին մէջ պիտի առնուին զէնք կրելու կարող 23 էն 24 տարեկան բոլոր երիտասարդք։

Երկու հեծելախումբք՝ որոց մին կը գտնուէր յԱթէնք և միւսն յԱրկօս, հրաման ստացած են Լարիսա և Թիրնավօ երթալ։ Ուրիշ հետեւակազօրաց և հեծելազօրաց վաշտեր ալ հրաման ստացած են փոխադրուիլ ի Թեսաղիա, Վօլօս, Արթա, Միսօլօնկի և Յունաստանի այլ և այլ կողմերն։

Մինչեւ հոկտ. 5 Թեսաղիոյ մէջ համախմբելի զօրաց թիւը պիտի հասնի 10,000 հոգւոյ, 30 թնդանօթով։

Աթէնքի Համալսարանի ուսանողք որոշած են կամաւորաց գունդ մը կազմել Նախիշեան Լեգէոն անուամբ։ Մինչեւ սեպտ. 13/25, կամաւոր գրուած էին 200 ուսանողք։ Ասոնք համախմբուելով, մասնախումբ մ'ընտրեր են՝ որոյ պատուակալ Նախագահութիւնն յանձնուեր է Աթէնքի արքեպիսկոպոս Տ. Բրոկոպիոսի և անդամ ընտրուեր են՝ Պ. Պ. Ա. Սինկրօս, Ֆրէարիթիս, Պօձաբիս, Կէննատիոս, Տեզասքէվայիտէս և Քաճիմպալի։ Կամաւոր այնպիսի վարչութիւնն յանձնուած է այս մասնախումբին։

Ժողովրդական գումարումները կը շարունակեն։ Միթինկ մ'այնքան աղմկայոյզ եղած է որ ոստիկանութիւնն հարկադրեր է միջամտել, բայց չյաջողելով հանդարտեցնել տաք գլուխ ժողովականներն, զօրաց գունդ մ'ալ օգնութեան հասեր է զանոնք ցրուելու համար։

* * *

Եօրկիոս Թագաւորն Աթէնք դարձաւ անցեալ կիրակի։ Ժողովուրդն յոյժ ջերմագին ընդունելութիւն ըրաւ։ Անհուն ամբոխ մը դրօշակներ պարզած և բուռն «կեցցէ»ներով ընկերացաւ նմա մինչեւ պալատան դուռը։

Թագաւորը պալատան պատշգամին ելաւ և խօսքը ժողովրդեան ուղղելով, ըսաւ թէ իրաց կացութիւնն յոյժ ծանր է և արտասովոր, թէ մեծամեծ զոհողութիւնք պիտի խնդրուին երկրէն, բայց թէ հելլէն հայրենասէրք սիրայօժար պիտի ընդունին այդ զոհողութիւններն։ Թագաւորն յարեց թէ Յունաստան պարտի լրջութեամբ խորհիլ պարագայից վրայ, թէ ժողովուրդը պարտի վստահութիւն ունենալ իւր վեհապետին հայրենասիրութեան և կառավարութեան իմաստութեան վրայ։

Թագաւորին այս վերջին խօսքեր որոտագին ծափահարութիւններ հրաւիրեցին։

ՔԱՂԱՔԱՊԱՀ ԶՕՐՔ
ԱՐԵՒԵԼԵԱՆ ՌՈՒՄԵԼԻԻ

Աւելորդ չէ, կարծենք, գաղափար մը տալ Արեւելեան Ռումէլիի քաղաքապահ զօրաց (միլիս) կազմակերպութեան վրայ, որք մեծ դեր մը կատարեցին պուլկարական ապստամբութեան գործոյն մէջ։

